- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Ճանապարհներ և փողոցներ
- Երկաթգծեր
- Գետային ցանց
- Բնակավայրեր
- Աղբյուրակ, ջրամբար


Արարատ

Արարատ քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 12 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:


2022 թվականի 1-ին եռամսյակում Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիան փետրվար ամսին գերազանցել է համապատասխան ՍԹԿ-ն 1,1 (ՍԹԿ=0.15մգ/մ³): Ծծմբի և ազոտի երկօքսիդների կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 34. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 35. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 36. Արարատ քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


Կապան

Կապան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 11 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:

2022 թվականի 1-ին եռամսյակում Կապան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 37. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 38. Կապան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


Քաջարան

Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 15 շարժական պասսիվ նմուշառման դիտակետ:

2022 թվականի 1-ին եռամսյակում Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:



Գծապատկեր 39. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները





Գծապատկեր 40. Քաջարան քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Չարենցավան

Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում կատարվում են ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում է 10 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:


2022 թվականի 1-ին եռամսյակում Չարենցավան քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները:




Ծաղկաձոր

Ծաղկաձոր քաղաքում կատարվում են փոշու, ծծմբի և ազոտի երկօքսիդների դիտարկումներ: Քաղաքում գործում են մեկ անշարժ դիտակայան և 14 շարժական պասիվ նմուշառման դիտակետ:


2022 թվականի 1-ին եռամսյակում Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում որոշված ցուցանիշների միջին ամսական կոնցենտրացիաները երեք ամիսների ընթացքում չեն գերազանցել համապատասխան ՍԹԿ-ները*:



Գծապատկեր 43. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում փոշու միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները





Գծապատկեր 44. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 45. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները


*ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N160-Ն որոշման 3-րդ կետի կամաձայն զբոսաշրջային կենտրոններում վնասակար նյութերի սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների արժեքներն ընդունվում են տվյալ նյութի 0.8 սահմանային թույլատրելի կոնցենտրացիայի չափով

Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ծծմբի երկօքսիդի (SO_2) միջին
ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը




Պայմանական նշաններ



- Պասիվ նմուշառման դիտակետեր
- Ակտիվ նմուշառման դիտակայաններ
- Գետային ցանց
- Ճանապարհներ և փողոցներ
- Բնակավայրեր



Ծծմբի երկօքսիդի կոնցենտրացիոն
բաշխվածության սանդղակը (մգ/մ³)




**Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային օդում ազոտի երկօքսիդի (NO_2)
միջին ամսական կոնցենտրացիոն բաշխվածությունը**




Պայմանական նշաններ

-  Պասիվ նմուշառման դիտակետեր
-  Ակտիվ նմուշառման դիտակայաններ
-  Գետային ցանց
-  Զանապարհներ և փողոցներ
-  Բնակավայրեր



Ազոտի երկօքսիդի կոնցենտրացիոն բաշխվածության սանդղակը (մգ/մ^3)



Մթնոլորտային տեղումների որակ

2022 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Ծաղկաձորում վերցվել է մթնոլորտային տեղումների 13 նմուշ: Նմուշներից յուրաքանչյուրում որոշվել է տեղումների որակը բնութագրող 35-ական ցուցանիշ: Որոշված ցուցանիշների կոնցենտրացիաները բերված են Աղյուսակ 4-ում: 1-ին եռամսյակում չներկայացված ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի տարեկան տեղեկագրում:

Աղյուսակ 4. Ծաղկաձոր քաղաքի մթնոլորտային տեղումներում որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները.


Ամսաթիվ	Զրաձնային ցուցիչ	Էլեկտրահաղորդականություն, մկՍմ/սմ	Սուլֆատ իոն, մգ/լ Քրոմատոգրաֆիական մեթոդ	Քլորիդ իոն, մգ/լ Քրոմատոգրաֆիական մեթոդ	Նիտրատ իոն, մգ/լ Քրոմատոգրաֆիական մեթոդ	Ամոնիում իոն, մգ/լ Սպեկտրոսկոպիկ մեթոդ
13-14.01.2022	5.23	13.1	1.76	0.37	1.28	0.479
19-20.01.2022	6.04	21.7	1.18	0.61	1.44	0.422
20-21.01.2022	5.70	12.2	0.68	0.41	1.75	0.567
27-28.01.2022	5.70	12.2	0.68	0.41	1.75	0.567
28-29.01.2022	5.85	24.2	0.73	1.35	2.00	0.304
02-03.03.2022	5.68	18.9	0.68	0.45	1.62	0.258
03-04.03.2022	6.18	24.7	2.29	0.53	1.63	0.507
09-10.03.2022	6.12	17.9	1.52	0.32	1.07	0.180
10-11.03.2022	5.68	18.3	1.45	0.48	1.09	0.526
11-12.03.2022	6.03	19.1	1.42	0.97	0.60	0.641
15-16.03.2022	5.78	17.7	1.32	0.54	1.14	0.511
19-20.03.2022	6.06	37.9	1.18	1.91	1.86	1.201
20-21.03.2022	5.50	19.1	1.34	1.01	2.17	0.219

**Եվրոպայում մեծ հեռավորությունների վրա օդի աղտոտիչների տարածման
մոնիթորինգի և գնահատման համատեղ ծրագիր**


Մթնոլորտային օդ

Ամբերդի միջազգային կայանում 2022 թվականի 1-ին եռամսյակում կատարվել են մթնոլորտային օդի և փոշու դիտարկումներ: Մթնոլորտային օդի նմուշներում որոշվել են ծծմբի երկօքսիդի, ազոտի երկօքսիդի, ամոնիակի և նիտրատ իոնի, իսկ փոշու նմուշներում՝ քլորիդ, նիտրատ, սուլֆատ, ամոնիում իոնների և 21 մետաղների պարունակությունները: Կատարված դիտարկումների վերաբերյալ ընդհանրական տեղեկատվություն կտրվի տարեկան տեղեկագրում:

Ազոտի երկօքսիդի ($ՍԹԿ_{միջ.}=0.04\text{մգ/մ}^3$) և ամոնիակի ($ՍԹԿ_{միջ.}=0.04\text{մգ/մ}^3$) միջին ամսական կոնցենտրացիաները չեն գերազանցել ՍԹԿ-ները:



Գծապատկեր 46. Ամբերդի կայանում ամոնիակի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 47. Ամբերդի կայանում ազոտի երկօքսիդի միջին ամսական կոնցենտրացիաների փոփոխությունները

Մթնոլորտային տեղումների որակ

2021 թվականի 1-ին եռամսյակի ընթացքում Ամբերդի կայանում վերցվել է 6 նմուշ: Նմուշներից յուրաքանչյուրում որոշվել է տեղումների որակը բնութագրող 35-ական ցուցանիշ: Որոշված ցուցանիշների կոնցենտրացիաները բերված են Աղյուսակ 5-ում: 1-ին եռամսյակում չներկայացված ցուցանիշների վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի տարեկան տեղեկագրում:

Աղյուսակ 5. Ամբերդի մթնոլորտային տեղումներում որոշ ցուցանիշների կոնցենտրացիաները.

Ամսաթիվ	Ջրածնային ցուցիչ	Էլեկտրահաղորդականություն, մկՍմ/սմ	Սուլֆատ իոն, մգ/լ, Քրոմատոգրաֆիական մեթոդ	Քլորիդ իոն, մգ/լ, Քրոմատոգրաֆիական մեթոդ	Նիտրատ իոն, մգ/լ, Քրոմատոգրաֆիական մեթոդ	Ամոնիում իոն, մգ/լ, Սպեկտրոսկոպիկ մեթոդ
10.01.2022	5.463	35.80	2.43	1.158	1.091	1.946
11.01.2022	6.153	33.90	0.557	2.101	0.333	1.346
12-13.01.2022	5.82	32.70	0.395	1.75	0.310	0.979
02-03.03.2022	5.463	35.80	2.429	1.158	1.091	1.946
03.04.03.2022	6.153	33.90	0.557	2.101	0.333	1.346
09-10.03.2022	5.82	32.70	0.395	1.75	0.310	0.979

2. ՄԱԿԵՐԵՎՈՒԹԱՅԻՆ ԵՎ ԱՏՈՐԵՐԿՐՅԱ ՔԱՂՑՐԱՀԱՍ ՁՐԵՐ

Միջավայրի պայմանների և մարդու առողջության վրա բացասաբար ազդող ֆիզիկական, քիմիական և կենսաբանական աղտոտիչների թափանցումը, առաջացումն ու կուտակումը բնական ջրերում կոչվում է ջրի աղտոտում: Ջրի աղտոտման աղբյուրները հետևյալն են.

- կենցաղային հոսքաջրերը,
- արդյունաբերական հոսքաջրերը,
- ձնհալի և անձրևների ժամանակ հողահանդակներից տեղափոխված պեստիցիդները,
- բնակավայրերից վնասակար նյութերը,
- անձրևի և ձյան միջոցով՝ մթնոլորտից անջատվող աղտոտող նյութերը:

Աղտոտման աղբյուրները կարող են լինել ինչպես կետային, այնպես էլ ցրված: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում աղտոտված են լինում կենսածին նյութերով, արդյունաբերական հոսքաջրերը՝ առավել հաճախ նավթամթերքներով, ֆենոլներով, ծանր մետաղներով (կապար, կադմիում, պղինձ, ցինկ և այլն) և բարդ օրգանական միացություններով (սինթետիկ լվացամիջոցներ, ներկեր, ճարպեր), որոնք վատթարացնում են ջրի որակը, խմելու և սննդի մեջ օգտագործելու համար դարձնում ոչ պիտանի, խախտվում են ջրային ավազանի կենսաբանական շարժընթացները, նվազում է աղտոտող նյութերից ջրի ինքնամաքման հասկությունը, փոխվում է ջրային կենսաբազմազանության կազմն ու սննդային արժեքը: Կենցաղային հոսքաջրերը հիմնականում պարունակում են աղիքային վարակիչ հիվանդությունների հարուցիչներ:

Մակերևութային ջրեր

2022 թվականի 1-ին եռամսյակում մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի դիտարկումներ իրականացվել են 91 հիդրոլոգիական դիտակետում, այդ թվում՝ 82 գետային, 5 ջրամբարային (Արփի լիճ, Ախուրյան, Մարմարիկ, Ապարան, Ազատ) և 4 լճային (Սևանա լճում): Դիտակետերում իրականացվում են ամենօրյա դիտարկումներ մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ (ջրի մակարդակ, ջրի և օդի ջերմաստիճան, սառցային երևույթներ, ջրի էլքի չափումներ): 57 օպերատիվ դիտակետերից ամենօրյա ռեժիմով տվյալներ են ստացվել մակերևութային ջրերի հիդրոլոգիական ռեժիմի վերաբերյալ, այդ տվյալների հիման վրա կազմվել են հիդրոլոգիական տեղեկագրեր և տրամադրվել պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմիններին և այլ շահառուների:

2022 թվականի 1-ին եռամսյակում մակերևութային ջրերի որակի մոնիթորինգն իրականացվել է հանրապետության 27 գետի, Երևանյան լիճ ջրամբարի, Արփա-Սևան ջրատարի և Սևանա լճի 14 դիտակետում: Ջրի որակը բնութագրվում է ֆիզիկաքիմիական մինչև 45 ինդիկատորային ցուցանիշով (հիմնական անիոններ և կատիոններ, սնուցող նյութեր, ծանր մետաղներ): Ջրի որակի գնահատումը կատարվել է համաձայն ՀՀ կառավարության 2011թ. հոկտեմբերի 27-ի N75-Ն որոշման: Մակերևութային ջրերի որոշ փորձանմուշներում որոշվել են նաև օրգանական միացությունների պարունակությունները:

Իրականացված դիտարկումների արդյունքները ներկայացված են Աղյուսակ 6-15-ում և Հավելված 3-ում:

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական դիտարկումներն իրականացվել են հանրապետության ազգային ցանցում ընդգրկված 119 ստորերկրյա ջրաղբյուրում, որոնք ներառում են 24 շատրվանող հորատանցք, 48 շշատրվանող հորատանցք և 47 բնաղբյուր: Ջրաղբյուրներում կատարվում են ջրի ծախսի, մակարդակի (ճնշման) և ջերմաստիճանի դիտարկումներ՝ ամսական 6 անգամ հաճախականությամբ:

Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Հյուսիսային ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 21 դիտակետում: Որոշ օպերատիվ հիդրոլոգիական դիտակետերի ջրի էլքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 6-ում:

Աղյուսակ 6. Հյուսիսային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական էլքեր, մ ³ /վ								
		հունվար			փետրվար			մարտ		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Փամբակ	Վանաձոր	2.88	3.28	88	2.89	3.30	88	2.99	5.06	59
Դեբեդ	Այրում	3.61	4.96	73	3.29	5.32	62	4.92	8.78	56
Չորագետ	Գարգառ	11.7	14.7	79	11.6	15.7	74	16.2	28.1	57
Աղստև	Բջնան	0.22	0.41	54	0.26	0.49	54	0.64	1.37	46
Գետիկ	Գոշ	4.15	5.68	73	4.35	5.97	73	4.76	8.68	55

Մակերևութային ջրերի որակ

Հյուսիսային ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 22 դիտակետում:

Փամբակ գետի ջրի որակը Սպիտակ քաղաքից ներքև հունվար և մարտ ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), Վանաձոր քաղաքից վերև հունվար և մարտ ամիսներին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վանաձոր քաղաքից ներքև հունարին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), փետրվար և մարտ ամիսներին՝ «վատ» (5-րդ դաս):

Դեբեդ գետի ջրի որակը Մարց գետի թափման կետից ներքև հատվածում հունվարին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս): Այրում քաղաքից վերև հատվածում ջրի որակը հունվարին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), փետրվար և մարտ ամիսներին՝ «միջակ» (3-րդ դաս): Սահմանի մոտ հատվածում հունվար և փետրվար ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս):

Չորագետ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հունվար և մարտ ամիսներին գնահատվել է «լավ» (2-րդ դաս):


Մարց գետի ջրի որակը գետաբերանի հատվածում հունվարին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս):

Ախթալա գետի ջրի որակը գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


Շնող գետի ջրի որակը Թեղուտ գյուղից վերև հատվածում հունվար և փետրվար ամիսներին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս): Գետաբերանի հատվածում երեք ամիսների ընթացքում ջրի որակը գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Աղստև գետի ջրի որակը Դիլիջան քաղաքից վերև հատվածում հունվար և մարտ ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Դիլիջան քաղաքից ներքև հատվածում փետրվարին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «լավ» (2-րդ դաս): Իջևան քաղաքից վերև հատվածում փետրվարին գետի ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «վատ» (5-րդ դաս): Իջևան քաղաքից ներքև հատվածում փետրվարին ջրի որակը գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «վատ» (5-րդ դաս):




Գետիկ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում փետրվարին գնահատվել է «լավ» (2-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս):



Գծապատկեր 48. Փամբակ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 49. Փամբակ գետում մոլիբդենի կոնցենտրացիաների փոփոխությունները






Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Հյուսիսային ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 2 բնադրյուրում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը: Հաղարծինի N2058 դիտակետում նկատվել են ծախսի աննշան իջեցումներ, իսկ N2059 դիտակետում՝ կայուն վիճակ:



Գծապատկեր 53. Հյուսիսային ՋԿՏ-ի բնադրյուններում ծախսերի փոփոխությունները

ՀՀ Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



ՊԵՏԱՐԱՄԱՆ ԼԵՂՆԵՐ

- Մարզկենտրոններ
- Բաղարներ
- Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի
 - ▶ Որակի մոնիթորինգի դիտակետեր
 - ▶ Հիդրոլոգիական դիտակետեր
 - ▶ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- 22 պետական սահման
- Հյուսիսային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 2-րդ դաս
- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



Ախտության ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Ախտությանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում, այդ թվում՝ 14 գետային և 2 ջրամբարային: Օպերատիվ դիտակետերից երկուսի ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 7-ում:


Աղյուսակ 7. Ախտությանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		հունվար			փետրվար			մարտ		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ախտության	Ախտորիկ	3.82	5.83	65	4.22	5.93	71	4.88	7.50	65
Մեծամոր	Մեծամոր	2.41	24.3	10	2.41	24.2	10	2.46	25.6	10

Մակերևութային ջրերի որակ

Ախտությանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 11 դիտակետում:

Մեծամոր գետի ջրի որակը Վաղարշապատ քաղաքից հարավ փետրվարին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), Վաղարշապատ քաղաքից հարավ-արևելք և Ռանչալար գյուղից ներքև հատվածներում փետրվարին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):






Գծապատկեր 54. Մեծամոր գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Ախտությանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են թվով 40 դիտակետում՝ 11 բնաղբյուրում, 5 շատրվանող և 24 չշատրվանող հորատանցք:


Ախտությանի ՋԿՏ-ի բնաղբյուրների ծախսը կայուն է, բացառությամբ N2037 դիտակետի: Շատրվանող հորատանցքերի ծախսը նույնպես կայուն է, մակարդակը՝ գրեթե անփոփոխ, բացառությամբ N108 դիտակետի, որն ունի բացասական մակարդակ: Չշատրվանող հորատանցքերի և գրունտային ջրհորների մակարդակները նշված ժամանակաշրջանում հիմնականում կայուն են:



ՀՀատրվանող հորատանցքեր

Ախուրյանի ՋԿՏ


Մակարդակ, մ



ՀՀատրվանող հորատանցքեր

Ախուրյանի ՋԿՏ

Մակարդակ, մ




Գծապատկեր 58. Ախուրյանի ՋԿՏ-ի չհատրվանող հորատանցքերի մակարդակների փոփոխությունները

Գրունտային ջրհորներ


Ախուրյանի ՋԿՏ

Մակարդակ, մ



Գծապատկեր 59. Ախուրյանի ՋԿՏ-ի գրունտային ջրհորների մակարդակների փոփոխությունները

ՀՀ Ախուրյանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը (փետրվար / 2022 թվական)



Հրազդանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Հրազդանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 16 դիտակետում, այդ թվում՝ 13 գետային, 2 ջրամբարային և մեկ ջրանցքի: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 8-ում:

Աղյուսակ 8. Հրազդանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		հունվար			փետրվար			մարտ		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Հրազդան	Հրազդան	2.07	2.82	73	2.18	2.86	76	2.17	5.46	40
Հրազդան	Արգել	2.19	2.92	75	2.24	3.02	74	2.27	4.18	54
Հրազդան	Երևան	9.76	6.12	160	9.81	7.55	130	8.99	12.8	70
Մարմարիկ	Հանքավան	0.64	0.38	168	0.64	0.38	167	0.63	0.68	93
Մարմարիկ	Աղավնաձոր	1.13	1.19	95	1.12	1.22	92	1.33	2.50	53
Քասախ	Վարդենիս	0.36	0.46	78	0.41	0.50	82	0.53	1.21	43
Քասախ	Աշտարակ	2.18	2.56	85	2.77	2.57	108	3.63	3.94	92

Մակերևութային ջրերի որակ


Հրազդանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 20 դիտակետում:

Քասախ գետի ջրի որակը Ապարան քաղաքից վերև, Ապարան քաղաքից ներքև և Աշտարակ քաղաքից վերև հատվածներում փետրվար և մարտ ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս): Աշտարակ քաղաքից ներքև և գետաբերանի հատվածներում փետրվարին գետի ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս):


Հրազդան գետի ջրի որակը Քաղսի գյուղից ներքև, Արգել գյուղից ներքև, Արգնի ՀԷԿ-ից վերև, Երևանից ներքև՝ Դարբնիկ գյուղի մոտ, գետաբերանի և Գեղանիստ գյուղի մոտ հատվածներում փետրվարին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Մարմարիկ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում փետրվարին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


Ծաղկաձոր (Տանձաղբյուր) գետի ջրի որակը Ծաղկաձոր քաղաքից վերև և ներքև հատվածներում փետրվարին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):



Գծապատկեր 60. Քասախ գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 61. Հրազդան գետում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 62. Հրազդան գետում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները


Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Հրազդանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են թվով 32 դիտակետում, այդ թվում՝ 10 բնադրյություն, 9 շատրվանող և 13 չշատրվանող հորատանցքում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:

Համեմատաբար կայուն ծախս է նկատվում Արագածոտնի մարզի գ. Ղազարավանի N 755, Երևան /ԵՐՀԷԿ/-ի N970, Կոտայքի մարզի գ. Սուլակի N1297 բնադրյություններում: Ծախսի նվազում է կատարվել Արագածոտնի մարզի գ. Կարբիի N1636, Ապարան քաղաքի N2051 և N2107 բնադրյություններում: Շատրվանող հորատանցքերում ջրի կայուն ծախս նկատվել է Արարատի մարզի N1535, N1536 և N2007 շատրվանող հորատանցքերում: Ծախսի նվազում կատարվել է Արարատի մարզի N1519, N1526, N2008 և N2053 դիտակետերում: Շատրվանող հորատանցքերում ջրերի մակարդակները հիմնականում կայուն են, աննշան տատանումներ նկատվում են N1526 և N1536 դիտակետերում: Չշատրվանող դիտակետերում ջրի մակարդակը հիմնականում կայուն է, բացառությամբ N2004 և N2005 դիտակետերում, որտեղ առկա է մակարդակի նվազման միտում: Գրունտային ջրհորներում N2023 և N2010 դիտակետերում ջրերի մակարդակը կայուն է, N2011 դիտակետում նկատվում է որոշակի տատանում:




Գծապատկեր 63. Հրազդանի ՋԿՏ-ի բնադրյությունների ծախսերի փոփոխությունները



Գծապատկեր 64. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերի ծախսերի փոփոխությունները

Հատրվանող հորատանցքեր
Մակարդակ, մ


Հրազդանի ՋԿՏ



Գծապատկեր 65. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերի մակարդակների փոփոխությունները


Հշատրվանող հորատանցքեր
Մակարդակ, մ

Հրազդանի ՋԿՏ




Հշատրվանող հորատանցքեր
Մակարդակ, մ

Հրազդանի ՋԿՏ





Գծապատկեր 66. Հրազդանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերի մակարդակների փոփոխությունները



Գծապատկեր 67. Հրազդանի ՋԿՏ-ի գրունտային ջրերի մակարդակների փոփոխությունները

ՀՀ Հրազդանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի
 - ▶ որակի մոնիթորինգի դիտակետեր
 - ▶ հիդրոլոգիական դիտակետեր
 - ▶ Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրերի որակի դասեր

- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս



Սևանի ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Սևանի ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 17 դիտակետում, այդ թվում՝ 13 գետային, 4 լճային (Սևանա լիճ) և 1 ջրանցքում: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 9-ում:

Աղյուսակ 9. Սևանի ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ³/վ								
		հունվար			փետրվար			մարտ		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ձկնագետ	Ծովագյուղ	0.22	0.20	113	0.25	0.24	105	0.46	0.73	63
Մասրիկ	Ծովակ	2.23	2.53	88	2.23	2.59	86	2.34	2.97	79
Մարտունի	Գեղհովիտ	0.51	0.74	69	0.57	0.73	79	0.60	0.80	75
Արգիճի	Վ. Գետաշեն	2.55	2.29	111	2.61	2.29	114	2.97	2.81	106
Գավառագետ	Նորատուս	2.86	2.97	96	2.90	2.93	99	3.40	3.30	103

Մակերևութային ջրերի որակ

Սևանի ՋԿՏ-ում ջրի որակի մոնիթորինգն իրականացվում է 18 դիտակետում:

Ձկնագետ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում փետրվար և մարտ ամիսներին ջրի որակը գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս):

Մասրիկ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում փետրվարին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մարտին՝ «անբավարար» (4-րդ դաս):

Սոթք գետի ջրի որակը գետաբերանի հատվածում մարտին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):

Կարճաղբյուր գետի ջրի որակը գետաբերանի հատվածում փետրվարին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս):

Վարդենիս գետի ջրի որակը գետաբերանի հատվածում փետրվար և մարտ ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):

Մարտունի գետի ջրի որակը գետաբերանի հատվածում փետրվարին գնահատվել է «վատ» (5-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս):


Արգիճի գետի ջրի որակը գետաբերանի հատվածում փետրվարին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս):

Ծակքար գետի ջրի որակը գետաբերանի հատվածում փետրվարին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս), մարտին՝ «վատ» (5-րդ դաս):


Շողվազ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում փետրվարին գնահատվել է «անբավարար» (4-րդ դաս), մարտին՝ «միջակ» (3-րդ դաս):

Գավառագետ գետի ջրի որակը գետաբերանի հատվածում փետրվար և մարտ ամիսներին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):


Արփա-Սևան ջրատարի ջրի որակը Ծովինար գյուղից հարավ-արևելք հատվածում փետրվար և մարտ ամիսներին գնահատվել է «միջակ» (3-րդ դաս):



Գծապատկեր 68. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններույժ ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 69. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններույժ նիտրատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները





Գծապատկեր 70. Սևանա լիճ թափվող գետերի գետաբերաններույժ ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Սևանի ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 15 դիտակետում՝ 7 բնադրյություն, 7 շատրվանող և 1 չշատրվանող հորատանցքում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:


N1053, N2014, N2093 և N2091 բնադրյություններում ծախսերի տատանումները աննշան են, սակայն N31 և N2100 դիտակետերում նկատվում է զգալի ծախսի տատանում: Շատրվանող հորատանցքերի ջրերի ծախսերը և մակարդակները հիմնականում կայուն են: N2101 հորատանցքի մակարդակը չի ենթարկվել մեծ փոփոխության:



Գծապատկեր 71. Սևանի ՋԿՏ-ի բնադրյություններում ծախսերի փոփոխությունները


Հատրվանող հորատանցքեր
Մակարդակ, մ

Սևանի ՋԿՏ



Հատրվանող հորատանցքեր
Ծախս, լ/վ

Սևանի ՋԿՏ



Գծապատկեր 72. Սևանի ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում մակարդակների փոփոխությունները

Սևանա լիճ

2022 թվականի 1-ին եռամսյակում հիդրոլոգիական դիտարկումներ են իրականացվել Սևանա լճի 4 դիտակետում՝ (Սևանա թերակղզի, Շորժա, Կարճաղբյուր, Մարտունի): Հիդրոոդերևութաբանական տվյալների հիման վրա կազմվել է Սևանա լճի հուլիս, օգոստոս և սեպտեմբեր ամիսների ջրային հաշվեկշիռը:

Աղյուսակ 10. Սևանա լճի ջրային հաշվեկշիռը 2022 թվականի 1-ին եռամսյակում

Հունվար

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2021թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում			
	1	2	3		Նվազ.	միջին	Առավ.
ՄՈՒՏՔ							
Լիճը թափվող գետերով	11.15	11.34	12.08	34.57	24.0	37.2	49.2
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	3.24	2.26	2.03	7.53	0.00	8.71	20.4
Տեղումները լճի մակերևույթի վրա	2.70	9.50	2.80	15.0	2.10	22.9	78.8
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.70	7.90	2.90	5.80	7.90
Ընդամենը	19.69	25.70	19.61	65.0	31.8	68.5	127.1
ԵԼՔ							
Հրազդան գետով	0.00	0.00	0.00	0.00	0.00	22.4	184.6
Գոլորշացում լճի մակերևույթից	24.8	28.4	28.1	81.3	36.1	64.9	86.5
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.10	1.70
Ընդամենը	25.2	28.8	28.5	82.5	36.6	95.9	249.6
Կուտակում (նվազում)	-25.4	-12.8	-12.7	-50.9	-167.1	-32.5	63.3
Բացարձակ անկապք	19.89	9.70	3.81	33.40		2.20	
Հարաբերական անկապք %	44.1	25.2	11.8	28.8	0.10	6.60	24.0

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.43	1277.845	38.0875
Ամսվա վերջին օրը	1900.39	1277.464	38.0366
Միջին ամսական	1900.41	1277.655	38.0621

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում
31.01.22 և 31.01.21 մակարդակի տարբերությունը

- 0.04 (մ)

- 0.13 (մ)

Փետրվար

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2021թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում			
	1	2	3		Նվազ.	միջին	Առավ.
ՄՈՒՏՔ							
Լիճք թափվող գետերով	11.02	11.34	9.36	31.72	22.6	34.8	43.0
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	1.70	1.65	1.97	5.32	1.10	7.23	22.6
Տեղումները լճի մակերևույթի վրա	4.70	3.80	0.80	9.30	4.90	27.2	81.2
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.50	7.70	3.70	5.50	7.90
Ընդամենը	20.02	19.39	14.63	54.04	37.0	73.0	134.2
ԵԼՔ							
Հրազդան գետով	0.00	0.00	0.00	0.00	0.00	21.4	157.0
Գոլորշացում լճի մակերևույթից	17.6	14.8	11.2	43.6	0.00	32.4	84.2
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.00	1.70
Ընդամենը	18.0	15.2	11.6	44.8	0.40	61.3	180.5
Կուտակում (նվազում)	-12.7	0.00	12.7	0.00	-103.4	12.0	77.0
Բացարձակ անկապք	14.72	4.19	-9.67	9.24		0.10	
Հարաբերական անկապք %	45.0	21.6	39.8	17.1	0.00	6.10	31.6

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.38	1277.369	38.0238
Ամսվա վերջին օրը	1900.38	1277.369	38.0238
Միջին ամսական	1900.37	1277.274	38.0111

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում
 Մակարդակի փոփոխությունը 01.01.22 28.02.22 ընթացքում
 28.02.22 և 28.02.21 մակարդակի տարբերությունը

0.00 (մ)
 - 0.05 (մ)
 -0.17 (մ)

Մարտ

Ջրային հաշվեկշռի տարրերը	Ընդամենը (մլն. մ³)				Բազմամյա բնութագրեր (մլն.մ³) 1961–2021թթ.		
	Ըստ տասնօրյակների			Ամսվա ընթացքում			
	1	2	3		Նվազ.	միջին	Առավ.
ՄՈՒՏՔ							
Լիճը թափվող գետերով	12.55	12.90	14.78	40.23	32.7	51.2	85.8
Արփա-Սևան ջրատարով մուտք գործած ջրի ծավալը, այդ թվում ստորերկրյա ներհոսքը	2.84	2.80	3.55	9.19	1.90	10.1	35.2
Տեղումները լճի մակերևույթի վրա	15.7	28.1	7.40	51.2	12.6	41.0	93.0
Ստորերկրյա հոսք	2.60	2.60	2.70	7.90	3.60	5.80	7.90
Ընդամենը	33.69	46.40	28.43	108.52	55.6	100.4	178.3
ԵԼՔ							
Հրազդան գետով	0.00	0.00	0.00	0.00	0.00	17.2	168.0
Գոլորշացում լճի մակերևույթից	12.0	19.2	17.6	48.8	0.00	27.5	53.7
Ստորերկրյա հոսք	0.40	0.40	0.40	1.20	0.40	1.10	1.70
Ընդամենը	12.4	19.6	18.0	50.0	0.40	49.0	175.0
Կուտակում (նվազում)	25.5	25.4	25.5	76.4	-90.5	52.7	128.9
Բացարձակ անկապք	-4.21	1.40	-15.07	-17.88		-1.00	
Հարաբերական անկապք %	11.1	3.02	34.6	14.1	0.70	4.20	38.5

Բնութագրեր	Լճի մակարդակը, մ	Լճի մակերեսը, կմ²	Լճի ծավալը, կմ³
Ամսվա առաջին օրը	1900.39	1277.464	38.0366
Ամսվա վերջին օրը	1900.45	1278.035	38.1130
Միջին ամսական	1900.42	1277.750	38.0748

Մակարդակի փոփոխությունը ամսվա ընթացքում

0.06 (մ)

Մակարդակի փոփոխությունը 01.01.22 31.03.22 ընթացքում

0.02 (մ)

31.03.22 և 31.03.21 մակարդակի տարբերությունը

- 0.18 (մ)


2022 թվականի հունվարի 1-ին լճի մակարդակը կազմել է 1900.43մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատությամբ ցածր է եղել 9 սմ-ով: 2022 թվականի փետրվարի 28-ին լճի մակարդակը կազմել է 1900.38մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատ ցածր է եղել 17սմ-ով, մարտի 31-ին՝ 1900.45մ, որը նախորդ տարվա նույն օրվա համեմատ ցածր է եղել 17սմ-ով: 2022 թվականի հունվարի 1-ից մինչև մարտի 31-ը լճի մակարդակը իջել է 2 սմ-ով:

Արփա-Սևան ջրատարով լիճ մուտք գործած ջրի ծավալը հունվար ամսին կազմել է 7.525 մլն մ³, փետրվարին՝ 5.325 մլն մ³, մարտին՝ 9.187 մլն մ³:


2022 թվականի հունվարի 1-ին Սևանա լճի մակերեսը կազմել է 1277.369 կմ², ծավալը 38.0875 կմ³, իսկ եռամսյակի վերջին օրը՝ մարտի 31-ին համապատասխանաբար՝ 1278.035 կմ² և 38.1130կմ³:

Սևանա լճի ջրի որակի ուսումնասիրության նպատակով ջրի որակի նմուշառումն իրականացվել է Փոքր և Մեծ Սևանների տարբեր խորություններից: Սևանա լճի ջրի որակի գնահատումն իրականացվում է ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 27-ի Հավելված 12.1-ի համաձայն: Երեք ամիսների ընթացքում Սևանա լճի ջրի որակի գնահատականները ներկայացված են (*Աղյուսակ 11*):


Սևանա լճում կենսածին նյութերի պարունակությունները.




Գծապատկեր 73. Մեծ Սևանում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 74. Փոքր Սևանում ամոնիում իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները




Գծապատկեր 75. Մեծ Սևանում նիտրատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 76. Փոքր Սևանում նիտրատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 77. Մեծ Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 78. Փոքր Սևանում ֆոսֆատ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

Աղյուսակ 11. Սևանա լճի ջրի որակը 2022 թվականի 1-ին եռամսյակում
Հուլիս

Տեղադրություն, խորություն	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դաս	Ջրի որակի ընդհանրական դաս
Մեծ Սևան, 0.5մ խորություն	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Մեծ Սևան, 5մ խորություն	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Մեծ Սևան, 10մ խորություն	Ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Մեծ Սևան, 20մ խորություն	ԹՔՊ, ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Մեծ Սևան, 25մ խորություն	Ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Մեծ Սևան, 30մ խորություն	Ֆոսֆատ իոն, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Ամոնիում իոն, նիտրիտ իոն	4-րդ	
Փոքր Սևան, 0.5մ խորություն	Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	4-րդ
	Նիտրիտ իոն	4-րդ	
Փոքր Սևան, 5մ խորություն	ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ՀԱԱ, ընդհանուր ֆոսֆոր	3-րդ	5-րդ
	Նիտրիտ իոն	5-րդ	

<i>Տեղադրություն, խորություն</i>	<i>Ջրի որակի ցուցանիշ</i>	<i>Ջրի որակի ցուցանիշի դաս</i>	<i>Ջրի որակի ընդհանրական դաս</i>
<i>Փոքր Սևան, 10մ խորություն</i>	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ԼԱՍ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Փոքր Սևան, 20մ խորություն</i>	<i>Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ԼԱՍ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 30մ խորություն</i>	<i>Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ԼԱՍ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 55մ խորություն</i>	<i>Ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ԼԱՍ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 70մ խորություն</i>	<i>ԹԿՊ, ԹՔՊ, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ԼԱՍ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 80մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ԼԱՍ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	

Փետրվար

<i>Տեղադրություն, խորություն</i>	<i>Ջրի որակի ցուցանիշ</i>	<i>Ջրի որակի ցուցանիշի դաս</i>	<i>Ջրի որակի ընդհանրական դաս</i>
<i>Մեծ Սևան, 0.5մ խորություն</i>	<i>ԹՔՊ, բոր, սելեն, ԼԱՍ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 5մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ֆոսֆատ իոն, բոր, ԼԱՍ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 10մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ֆոսֆատ իոն, բոր, ԼԱՍ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 20մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ֆոսֆատ իոն, բոր, ԼԱՍ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 25մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ֆոսֆատ իոն, բոր, ԼԱՍ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 30մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ֆոսֆատ իոն, բոր, սելեն, ԼԱՍ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	



<i>Տեղադրություն, խորություն</i>	<i>Ջրի որակի ցուցանիշ</i>	<i>Ջրի որակի ցուցանիշի դաս</i>	<i>Ջրի որակի ընդհանրական դաս</i>
<i>Փոքր Սևան, 0.5մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրատ իոն, ֆոսֆատ իոն, մոլիբդեն, բոր, ԸԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Փոքր Սևան, 5մ խորություն</i>	<i>Ֆոսֆատ իոն, բոր, ԸԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 10մ խորություն</i>	<i>ԹՔՊ, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, բոր, սելեն, ԸԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 20մ խորություն</i>	<i>Ֆոսֆատ իոն, բոր, ԸԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 30մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ԸԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
<i>Փոքր Սևան, 30մ խորություն</i>	<i>Նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 55մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ֆոսֆատ իոն, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 70մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ֆոսֆատ իոն, բոր, սելեն, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 80մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ֆոսֆատ իոն, բոր, սելեն, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	

Մարտ

<i>Տեղադրություն, խորություն</i>	<i>Ջրի որակի ցուցանիշ</i>	<i>Ջրի որակի ցուցանիշի դաս</i>	<i>Ջրի որակի ընդհանրական դաս</i>
<i>Մեծ Սևան, 0.5մ խորություն</i>	<i>Բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 5մ խորություն</i>	<i>Բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 10մ խորություն</i>	<i>Բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 20մ խորություն</i>	<i>ԹԿՊ, նիտրիտ իոն, բոր, ԸԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>ԹՔՊ, ամոնիում իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Մեծ Սևան, 25մ խորություն</i>	<i>Նիտրիտ իոն, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>ԹՔՊ, ամոնիում իոն</i>	<i>4-րդ</i>	

<i>Տեղադրություն, խորություն</i>	<i>Ջրի որակի ցուցանիշ</i>	<i>Ջրի որակի ցուցանիշի դաս</i>	<i>Ջրի որակի ընդհանրական դաս</i>
<i>Մեծ Սևան, 30մ խորություն</i>	<i>Բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 0.5մ խորություն</i>	<i>Նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>ԹՔՊ, ամոնիում իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 5մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ֆոսֆատ իոն, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 10մ խորություն</i>	<i>Ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>ԹՔՊ, նիտրիտ իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 20մ խորություն</i>	<i>ԹՔՊ, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, բոր, ԸԱԱ</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 30մ խորություն</i>	<i>Ամոնիում իոն, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>ԹՔՊ</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 55մ խորություն</i>	<i>ԹՔՊ, ամոնիում իոն, ֆոսֆատ իոն, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>3-րդ</i>
<i>Փոքր Սևան, 70մ խորություն</i>	<i>ԹՔՊ, նիտրիտ իոն, ֆոսֆատ իոն, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>4-րդ</i>
	<i>Ամոնիում իոն</i>	<i>4-րդ</i>	
<i>Փոքր Սևան, 80մ խորություն</i>	<i>Ֆոսֆատ իոն, մանգան, բոր, ԸԱԱ, ընդհանուր ֆոսֆոր</i>	<i>3-րդ</i>	<i>5-րդ</i>
	<i>Ամոնիում իոն</i>	<i>4-րդ</i>	
	<i>Նիտրիտ իոն</i>	<i>5-րդ</i>	


ՀՀ Սևանի ջրավազանային կառավարման տարածքի մակերևութային ջրերի որակը



ՊԱՅՄԱՆԱԳԱՆ ՆՇԱՆՆԵՐ

- Մարզկենտրոն
- Քաղաքներ
- Բնակավայրեր
- Մակերևութային ջրերի որակի մոնիթորինգի դիտակետեր
- Ստորերկրյա ջրերի մոնիթորինգի դիտակետեր
- Գետային ցանց
- ՀՀ պետական սահման
- Լճեր և ջրամբարներ
- Սևանի ջրավազանային կառավարման տարածք

3-րդ	«վիճակ»	
4-րդ	«անբավարար»	
5-րդ	«վատ»	



Մակերևութային ջրերի որակի դասեր

- 3-րդ դաս
- 4-րդ դաս
- 5-րդ դաս

Արարատյան ջրավազանային կառավարման տարածք
Մակերևութային ջրեր
Հիդրոլոգիական դիտարկումներ

Արարատյան ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 12 դիտակետում, այդ թվում՝ 11 գետային և 1 ջրամբարային (Ազատի ջրամբար): Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի ելքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են Աղյուսակ 12-ում:


Աղյուսակ 12. Արարատյան ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի ելքը.


Գետ	Դիտակետ	Միջին ամսական ելքեր, մ ³ /վ								
		հունվար			փետրվար			մարտ		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Ազատ	Գառնի	2.03	3.05	66	2.08	3.11	67	2.17	3.55	61
Վեդի	Ուրցաձոր	0.58	0.77	76	0.75	0.87	86	0.86	1.34	64
Արփա	Ջերմուկ	1.70	2.54	67	1.86	2.46	75	1.83	2.71	68
Արփա	Արենի	7.22	6.94	104	6.54	7.36	89	6.37	10.9	58

Ստորերկրյա քաղցրահամ ջրեր



Արարատյան ՋԿՏ-ում ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 23 դիտակետում՝ 10 բնաղբյուրում, 3 շատրվանող և 10 չշատրվանող հորատանցքերում և 4 գրունտային ջրհորում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը, ծախսը և մակարդակը:

Արարատյան ՋԿՏ-ի բնաղբյուրներում ծախսի փոփոխություններ չի նկատվել, բացառությամբ N502 և N787 դիտակետերում: Շատրվանող հորատանցքերի և գրունտային ջրհորների մակարդակները կայուն են: Շատրվանող հորատանցքերի ջրի ծախսը չի փոփոխվել, բացառությամբ N2067 դիտակետի, որտեղ նկատվում է ծախսի նվազեցում մոտ 0.3 լ/վ-ով:








Գծապատկեր 79. Արարատյան ՋԿՏ-ի բնադրյունների ծախսերի փոփոխությունները



Գծապատկեր 80. Արարատյան ՋԿՏ-ի շատրվանող հորատանցքերում մակարդակների փոփոխությունները



ՀՀ Արարատյան ջրավազանային կառավարման տարածք



Հարավային ջրավազանային կառավարման տարածք

Մակերևութային ջրեր

Հիդրոլոգիական դիտարկումներ

Հարավային ՋԿՏ-ում հիդրոլոգիական դիտարկումներն իրականացվում են 9 դիտակետում: Որոշ օպերատիվ դիտակետերի դիտարկումներից ստացված ջրի էլքերի վերաբերյալ միջին ամսական փաստացի տվյալները և նորմաների նկատմամբ շեղումները ներկայացված են աղյուսակ 13-ում:

Աղյուսակ 13. Հարավային ՋԿՏ-ի որոշ դիտակետերում ջրի էլքը.

Գետ	Դիտակետ	Միջին ամսական էլքեր, մ ³ /վ								
		հունվար			փետրվար			մարտ		
		փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%	փաստացի	նորմա	%
Մեղրիգետ	Մեղրի	0.20	0.91	22	0.50	1.03	49	0.85	2.06	42
Ողջի	Կապան	1.23	1.45	85	1.21	1.83	66	1.56	4.74	33
Որոտան	Գորայք	1.73	2.00	86	1.73	2.01	86	1.71	2.17	79


Ստորերկրյա քաղցրահամ ջրեր

Հարավային ՋԿՏ-ի ստորերկրյա քաղցրահամ ջրերի քանակական մշտադիտարկումներ կատարվել են 7 բնաղբյուրում, որտեղ դիտարկվել են ջրի ջերմաստիճանը և ծախսը:

Ծախսի տատանումները աննշան են և կրում են բնական բնույթ: Ծախսի զգալի ավելացում՝ մոտ 0.5 լ/վ-ով դիտվում է N1175 դիտակետում:


Բնաղբյուրներ
Ծախս, լ/վ

Հարավային ՋԿՏ




Բնաղբյուրներ
Ծախս, լ/վ

Հարավային ՋԿՏ



Գծապատկեր 83. Հարավային ՋԿՏ-ի բնաղբյուրներում մակարդակների փոփոխությունները

ՀՀ Հարավային ջրավազանային կառավարման տարածք



Ջրամբարներ

Ախուրյանի, Արփի լիճ, Ագատի և Ապարանի ջրամբարներում իրականացվում են հիդրոլոգիական դիտարկումներ և ջրի որակի մոնիթորինգ, Մարմարիկի ջրամբարում իրականացվում են միայն հիդրոլոգիական դիտարկումներ, իսկ Կեչուտի ջրամբարում և Երևանյան լճում՝ միայն ջրի որակի մոնիթորինգ:


2022 թվականի 1-ին եռամսյակում ջրամբարների լցվածությունների մեծությունները եռամսյակի ամիսների վերջին օրերի դրությամբ ներկայացված են 14-րդ աղյուսակում:

Աղյուսակ 14. Ջրամբարների ջրալցվածությունը. 2022 թվականի 1-ին եռամսյակում


Ջրամբարի անվանումը	Ջրամբարի ընդհանուր ծավալը. մլն. խոր.մ	Փաստացի լցվածությունը, հունվարի 31-ի դրությամբ		Փաստացի լցվածությունը, Փետրվարի 28-ի դրությամբ		Փաստացի լցվածությունը, Մարտի 31-ի դրությամբ	
		ընդամենը մլն. խոր.մ	ընդհանուր ծավալի նկատմամբ %	ընդամենը մլն. խոր.մ	ընդհանուր ծավալի նկատմամբ %	ընդամենը մլն. խոր.մ	ընդհանուր ծավալի նկատմամբ %
Ախուրյան	525	102.3	19	135.9	26	170.4	32
Արփի լիճ	105	20.0	19	21.0	20	23.0	22
Ագատ	70	25.33	36	30.53	44	35.11	50
Ապարան	91	14.75	16	15.50	17	18.20	20
Մարմարիկ	24	2.23	9	2.38	10	2.83	12

Ջրամբարների ջրի որակ

Երևանյան լիճ ջրամբարի ջրի որակը փետրվարին գնահատվել է «վատ» (5-րդ դաս):



Գծապատկեր 84. Երևանյան լճում նիտրիտ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները



Գծապատկեր 85. Երևանյան լճում նիտրիտ իոնի կոնցենտրացիաների փոփոխությունները

Աղյուսակ 15. Ջրամբարների ջրի որակը 2022թ. 1-ին եռամսյակում

Փետրվար

Ջրային օբյեկտ	Դիտակետի տեղադրությունը (Դիտակետի համարը)	Ջրի որակի ցուցանիշ	Ջրի որակի ցուցանիշի դասը	Ջրի որակի ընդհանրական դասը
Երևանյան լիճ ջրամբար (112)	Ամբարտակի մոտ	Նիտրիտ իոն, նիտրատ իոն, ԸԱԱ	3-րդ	5-րդ
		Ֆոսֆատ իոն, ընդհանուր ֆոսֆոր	4-րդ	
		Ամոնիում իոն	5-րդ	

3. ԱՆՏԱՌՆԵՐ

Սևանա լճի ափամերձ տարածքների մաքրման աշխատանքների ուսումնասիրություն

«Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից 2021 թվականի դեկտեմբերի 30-ին ներկայացված կատարողական ակտում ներկայացված է 2021 թվականի նոյեմբերի 15-ից մինչև դեկտեմբերի 30-ը կատարված աշխատանքների արդյունքները: Աշխատանքներն իրականացվել են Մարտունու մասնաճյուղի Վարդենիկ տեղամասում:

Ակտում նշված էր, որ մաքրվել էր 5.3հա տարածք, որտեղից դուրս էր բերվել 19.6խմ փայտանյութ:

